Հաստատված է

ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի

Գիտական խորհրդի 2013թ. օգոստոսի 29-ի նիստում

Նախագահ՝ Ս.Ա.Սեդրակյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԳՀՍ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2013

ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի Ուսանողական գիտական ընկերության նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

ՈՒԳԸ-ի գործունեության առաքելությունն ու նպատակներն են .

- Գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում,
- ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ գիտական ու կրթական միջոցառումների կազմակերպում՝ դրանցում ընգրկելով նաև ներհամալսարանական այլ ստորաբաժանումներ և արտահամալսարանական գիտական ներուժը,
- ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում,
- համալսարանական երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում և առկա բազայի մասին տեղեկատվության համակարգում,
- աջակցության ապահովում շնորհաշատ ուսանողներին և ասպիրանտներին,
- գիտական խմբերում և գիտական ծրագրերում ուսանողների ներգրավում,
- այլ գիտական կենտրոնների հետ կապի հաստատում և տեղեկատվության փոխանակում:

Գիտական խորհուրդ

ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ՈՒԳԸ ղեկավար մարմինը Ուսանողական գիտական ընկերության գիտական խորհուրդն է, որի կազմի մեջ են ՈՒԳԸ նախագահ և անդամներ: ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ՈՒԳԸ գիտական խորհուրդը քննարկում և որոշում է ՈՒԳԸ-ի գործունեության կարևորագույն ուղղությունները, մշակում է Ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում և կոորդինացնում է ՈՒԳԸ-ի աշխատանքները և ծրագրերը, վավերացնում է Ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը:

Նախագահ

ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ՈՒԳԸ նախագահը հաստատվում է ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի գիտական խորհրդի կողմից, երեք տարի ժամկետով՝ ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ռեկտորի ներկայացմամբ: ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ՈՒԳԸ նախագահն ի պաշտոնե ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի գիտական խորհրդի անդամ է: Նա ներկայացնում է ընկերությունը, համակարգում է

ընկերության գիտական խորհրդի գործունեությունը, ապահովում է ընկերության կառուցվածքային միավորների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, ընկերության անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր: Նա տարեկան հաշվետվություն է ներկայացնում ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի գիտական խորհրդին:

Ուսանողական գիտական ընկերության անդամներ

ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը ձևավորվում է համալսարանի յուրաքանչյուր ամբիոնի կողմից ներկայացված առնվազն մեկ ներկայացուցչից:

ՈՒԳԸ-ն իր գործունեությունը կազմակերպում է ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ՈՒԳԸ Կանոնադրության, և ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ՈՒԳԸ գիտական խորհրդի ընդունած որոշումների համաձայն:

Աշխատանքային ժամանակավոր խմբեր

ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ՈՒԳԸ աշխատանքները պատշաճ կազմակերպելու և միջոցառումները համակարգելու համար ձևավորվում են աշխատանքային խմբեր, որոնց լիազորությունները դադարում են իրենց կոորդինացրած աշխատանքների ավարտից հետո: ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ՈՒԳԸ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և մասշտաբներն ընդլայնելու նպատակով ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի ՈՒԳԸ նախագահի կողմից կարող են նշանակվել պատասխանատուներ: